



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 060 54 43 03

N^o 25/3-4/10351-12
28.09.2012թ.

«Հարկ վճարողների պաշտպանություն»
Հ/Կ նախագահ Փ.Թադևոսյանին

Ձեր 25.09.2012թ. N 020 գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում եմ.

1. Հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի կիրառման արդյունքում ստվերային շրջանառության կրճատման վերաբերյալ տեղեկատվություն կարող էր ձևավորվել, եթե ստվերային շրջանառությունները չափված լինեին մինչև հարկային հաշիվների նոր կարգի կիրառումը և դրանից հետո: Եթե ստվերային շրջանառության ծավալները հնարավոր լինեին չափել, ապա հավատացնում ենք, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից կիրականացվեին այնպիսի միջոցառումներ, ինչի արդյունքում այդ շրջանառությունները կվերաձվեին բացահայտ և հարկվող շրջանառությունների:

2. Վերը նշվածը վերաբերվում է նաև անապրանք փաստաթղթերի կիրառմանը (եթե «անապրանք գործարքներ» ասելով նկատի ունեք այդ փաստաթղթերի կիրառման դեպքերը): Անապրանք փաստաթղթերի կիրառման դեպքերի կրճատման վերաբերյալ տեղեկատվություն կարող էր ձևավորվել, եթե հայտնի լինեին անապրանք փաստաթղթերի կիրառման բոլոր դեպքերը և դրանց շրջանառությունները՝ մինչև հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի կիրառումը և դրանից հետո:

Ինչպես մինչև հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի ներդրումը, այնպես էլ դրանից հետո՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացված և իրականացվող աշխատանքների արդյունքում բացահայտվել և բացահայտվում են հարկման հիմք հանդիսացող շրջանառությունները թաքցնելու կամ պակաս ցույց տալու, անապրանք փաստաթղթեր դուրս գրելու և դրանց միջոցով հարկման բազաները նվազեցնելու դեպքեր: Հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի դերը ստվերային շրջանառության ծավալների կամ անապրանք փաստաթղթերի կիրառման դեպքերի կրճատման տեսանկյունից կարող է միայն փորձագիտական կարգով գնահատվել, ինչը պահանջում է խորը և համակողմանի վերլուծական աշխատանքներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացրած միջոցառումները չեն սահմանափակվում միայն հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի ներդրմամբ: Կարծում եմ, որ կասկած չի

կարող առաջացնել այն պնդումը, թե հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի կիրառումը նվազեցրել է անբարեխիղճ հարկ վճարողների կողմից շրջանառության ծավալները կրճատելու, անապրանք փաստաթղթեր կիրառելու, իրական մատակարարումներին վերաբերվող հաշվարկային փաստաթղթերը ոչնչացնելու կամ փոխելու հնարավորությունները:

3. Փորձագիտական գնահատումների ոլորտին է վերաբերվում նաև հարկային հաշիվների դուրսգրման նոր կարգի կիրառման արդյունքում պետական բյուջեի եկամուտների աճի վերաբերյալ հարցը:

4. Ձեր 4-րդ և 5-րդ հարցերի կապակցությամբ հայտնում եմ, որ «Հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձեւերի տպագրության համար» անվանմամբ արտաբյուջետային միջոցների գանձապետական հաշվում գումարների շարժի (հարկային հաշիվների ձևաթղթերի ձեռքբերման համար հարկ վճարողների կողմից վճարված գումարների և դրանց հաշվին կատարված ծախսերի) վերաբերյալ տեղեկություններ կարող են ներկայացվել, եթե Ձեր կողմից ներկայացվեն հիմնավորումներ, թե հասարակական կազմակերպության կանոնադրական ո՞ր խնդրի իրականացումն է անհնարին իրականացնել առանց հարկային մարմնից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, ի՞նչ նպատակով է օգտագործվելու այդ տեղեկատվությունը, ո՞ր իրավական ակտերով է հարկային մարմինը պարտավոր հրապարակել, այդ թվում՝ Ձեր կազմակերպությանը տրամադրել պահանջվող՝ վերը նշված տեղեկատվությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ տեղեկատվությունը պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով ձևավորված լինի և համապատասխանի Ձեր հիշատակած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տրամադրման ենթակա տեղեկություններին, որպեսզի օրենքի ուժով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն պարտավորված լինի այն Ձեզ ներկայացնելու: Այլ դեպքերում դիմումով տեղեկատվություն կտրամադրվի, եթե խնդրարկված տեղեկատվությունը ձևավորված է և օրենքով սահմանված հիմքեր չկան այդ տեղեկատվությունը չտրամադրելու համար:



Վ. Միրումյան